

ՌՈՒՂԱՆ ՆԱՆՈՒՄՅԱՆ, Ստեփանոս Նազարյան. կյանքը և գործունեությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1978, 296 էջ:

XIX դ. 40—60-ական թվականների հայ խոշոր լուսավորիչ Ս. Նազարյանի գործունեությունը վաղուց արդեն զբաղեցնում էր գրախոսվող աշխատության հեղինակին: Ռ. Նանումյանը երկար տարիներ ուսումնասիրել է Ս. Նազարյանի ստեղծագործությունը և գրական-հրապարակախոսական գործունեությունը, մանրակրկիտ և համբերատար աշխատանքով ժողովել է նրա նամակները, Միության կենտրոնական արխիվներում, Կազանի և Տարտուի արխիվներում հետազոտել Ս. Նազարյանի անվան հետ կապված յուրաքանչյուր փաստաթուղթ ու հիշատակություն: Իր գիտահետազոտական աշխատանքի արդյունքները Ռ. Նանումյանը հրապարակել է գիտական պարբերականների էջերում, խնամքով պատրաստել և հրատարակել է Ս. Նազարյանի «նամականի» ստվարածավալ գիրքը: Տարիների նրա հետազոտությունների արգասիքն է և այսօր մեր ընթերցողների դատին հանձնված մենագրությունը:

Գրախոսվող աշխատությունը հիմնականում ամբողջացնում է մեր պատկերացումները Ս. Նազարյանի գործունեության վերաբերյալ, տեսանելի դարձնում հայ լուսավորչի կյանքի ու վաստակի գրեթե անընդգրկելի հորիզոնները:

Ս. Նազարյանը ծնվել է Թիֆլիսում, 1812 թ., սովորել և ապա աշխատել է նորարաց ներսիսյան դպրոցում: Նրա շփումները Հ. Ալամդարյանի և Ներսիսյան դպրոցի ուսուցիչների ու առաջին շրջանավարտների հետ, Արևելյան Հայաստանի ազատագրման պատմական խոշոր երևույթը մեծապես ազդում է Ս. Նազարյանի աշխարհայացքի ձևավորման վրա: Արդեն իսկ «Ներսիսյանի» Ներսիսյան դպրոցի աշակերտական ժողովածուում տպագրված Ս. Նազարյանի բանաստեղծությունը՝ նվիրված Հայաստանի ազատագրմանը, խոսում է այդ աշխարհայացքի առաջադիմական ուղղվածության մասին:

Մենագրության առաջին գլուխը խիստ արժեքավոր է արխիվային այն փաստաթղթերով, որոնք հիշմունքի հաջողվել է ձեռք բերել Հայաստանի և էստոնիայի պետական պատմական արխիվներից, Տարտուի համալսարանի ֆունդամենտալ գրադարանի արխիվից: Այսպես, վերջնականապես ճշտվում են վաղուց վիճերի առարկա դարձած՝ Ս. Նազարյանի ծննդյան թվականը և օրը (1812 թ. մայիսի 15), հրապարակվում են նրա գիմնազիական առաջադիմության վկայականը, համալսարանում նրան թողակ նշանակելու վերաբերյալ Ռուսաստանի լուսավորության մինիստր Ուվարովի և Դորպատի ուսումնական օկրուգի հոգաբարձության միջև տեղի ունեցած գրագրությունները: Դորպատի համալսարանի տարեկան հաշվետվությունների մատյանից հեղինակը կարողացել է գտնել նաև 1836—1840 թթ. փիլիսոփայության ֆակուլտետի պատմության բաժնի (ուր սովորում էր Ս. Նազարյանը) ուսանողներին հանձնարարված գրականության ցուցակները: Գրքի առաջին բաժնում Ռ. Նանումյանը ներկայացնում է Ս. Նազարյանի ուսումնառության ողջ պրոցեսը, ընդգծում է համալսարանի դասախոսների, և՛ եվրոպական առաջավոր մտածողների՝ Լեսինգի, Շիլլերի, Գյոթեի և այլոց ստեղծագործության դերը՝ նրա աշխարհայացքի ձևավորման ու հարստացման գործում: Առանձնակի սիրով է արձանագրված Ս. Նազարյանի համար ճակատագրական այն դերը, որ նրա կյանքում ունեցել է Խ. Աբովյանը:

Հայ բանասիրության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում Կազանի համալսարանում Ս. Նազարյանի պաշտոնավարության հետ կապված մի շարք մանրամասներ, որոնք մեծ խնամքով վերականգնել է Ռ. Նանումյանը: Առհասարակ պետք է նկատել, որ եթե Ս. Նազարյանի գործունեության հյուսիսամերիկյան և կյանքի վերջին շրջանները ուսումնասիրված են բավականաչափ լավ, ապա նույնը չի կարելի ասել դորպատյան և Կազանի շրջանների մասին: Ռ. Նանումյանի «Ստեփանոս Նազարյան» մենագրությունը լրացնում է մեր բանասիրության համար հետաքրքրություն ներկայացնող այդ թերին և գիտական շրջանառության մեջ դնում Թաթարական իսլամ կենտրոնական պատմական արխիվից հանված արժեքավոր մի շարք վավերագրեր: Դրանք լուսաբանում են Ս. Նազարյանի կազանյան գործունեության տարբեր ուղղությունները (մանկավարժական գործունեություն, հայ գրականության պատմության ուղղագծերի ստեղծում, պարսից դասական գրականության ուսումնասիրություն, թեկնածուական, ապա դոկտորական դիսերտացիաների պաշտպանություն և այլն):

Ռ. Նանումյանն իրավացիորեն Ս. Նազարյանի կյանքի հարուստ պատմության մեջ առանձնաժամանակ ուշադրություն է դարձրել գիտական այն մեծ վաստակի վրա, որը նա մուծել է հայ բանասիրության և լեզվաբանության զանազան ոլորտներում: Հեղինակը սպառնում է տալիս Ս. Նազարյանի լեզվաշինական ձեռնարկումներին, դեռևս կաղանջան գործունեության տարիներին ուսումնական իրականության լուսավորության համար նրա մղած պրոպագանդային: «Այն ժամանակ,— դրում է մենագրության հեղինակը,— երբ Աթուլյանը Հանապարհներ էր որոնում դուրս դալու ռեակցիայի կապանքներից, Նազարյանին հաջողվում է հրապարակել ազգայնությունավորական այն մեծ ծրագիրը, որը խարսխված էր գրական նոր լեզվի, ազգային գրականության ստեղծման և զարգացման միանգամայն նոր պահանջների վրա» (էջ 77):

Ո. Նազարյանի գործունեության հիմնական պրոբլեմները կապվում են ժամանակի ուսական առաջադիմական մտավոր շարժման հետ, Ռ. Նանումյանն ընդգծում է անցյալ դարի 50-ական թթ. Ս. Նազարյանի առաջադրած պահանջները հայ հասարակությանը: Նա կոչ էր անում հետևել եվրոպական քաղաքակրթված սկզբների օրինակին, ասում է Ռ. Նանումյանը. պահանջում էր ստեղծել նոր տիպի դպրոցներ, հրատարակել պարբերականներ, կազմել ընկերություններ: «Նրանք դեպի առաջ դարի հետ, կամ քարացում և հոգևոր քարոյական մահ», կրկնում էր Ո. Նազարյանը: Սակայն հայ հասարակական կյանքի մտավոր վերելքի ծրագիրն անհնար պիտի լիներ իրագործել առանց աշխարհաբար լեզվի: Ռ. Նանումյանը հանգամանորեն քննում է այս բնագավառում Ո. Նազարյանի ծավալած հետևողական և անզիջում պայքարի բոլոր գրավազները՝ Վազանից մինչև «Հյուսիսափայլի» հրատարակության ժամանակները: Մանրամասն վերլուծելով 1851 թ. տպագրված «Ծաղազ» փորձական լոգոգրաֆիան ճառք գրքի առաջաբանը, Ռ. Նանումյանն իրավացիորեն մատնանշում է դրա պատմական նշանակությունը մեր գրապայքարի պատմության մեջ, այն որակում որպես «1850-ական թթ. արևելահայ գրական նոր լեզվի նվաճման համար սղվելիք պայքարն ազգաբարոյական դրոշմ» (էջ 108): Ավելին, ինչպես նշում է Ռ. Նանումյանը, այդ առաջաբանով Ս. Նազարյանը գիտականորեն հիմնավորում էր «ազգային ինքնահանաչման համար իր առաջադրած լուսավորական սկզբունքները», ժամանակի հայ ընթերցողին հասցնում այն կարևոր ճշմարտությունը, որ «մտածել մայրենի լեզվով, նշանակում է մտածել աշխարհաբար լեզվով» (էջ 109):

Հակիրճ, բայց համոզիչ ակնարկ է նվիրում հեղինակը Ս. Նազարյանի և Մ. Նալբանդյանի ծանոթության վաղ շրջանի գաղափարական շփումների հարցին: Այս առումով ուշագրավ է «Ծաղազ» հայկական մատենագրության ճառք վերլուծությունը և այն հետևությունը, թե «1850-ական թթ. հասարակական հակադիր հոսանքների միջև սրվող պայքարում Մ. Նալբանդյանը որոշում է Ստ. Նազարյանի ազգային-լուսավորական գործունեության պատմական դերը համադեմոկրատական շարժման մեջ» (էջ 125):

«Հյուսիսափայլին» նվիրված բաժինը, հասկանալի պատճառով, ամենածավալունը և հիմնականն է: Ռ. Նանումյանը սույն գլխում հանգամանորեն ներկայացնում է Ս. Նազարյանի փոխադասական, լուսավորական հայացքները, «Հյուսիսափայլի» և ժամանակի մամուլի հայ շրջանների միջև ծագած բանավեճերի պատմությունը: Այստեղ նույնպես մենագրության հեղինակը հրապարակելով բանասիրական իր հետախուզումների սկզբունքները, մի շարք հետաքրքրական նորություններ է հաղորդում ընթերցողին: Այսպես, պարզվում են «Հանգես նոր հայաստան» հատորներում զետեղված այլևայլ գրույցների, վարքագրությունների, բնագիտական նյութերի աղբյուրները: Ռ. Նանումյանը ճշտում է այն ուշագրավ փաստը, որ Մ. Նալբանդյանի թարգմանած «Թալիսմաններ» և «Դրսուհի» գրքերը վերադրվում են 1841 և 1845 թթ. թարգմանվել են և տպագրվել Բեյլիսկո աշխատակցության շրջանի «Օտեչեստվեննիկ ղապիսկի» ամսագրում: Մեր բանասիրական գիտության համար հետաքրքրական նորություն է և այն, որ «Թափառական հրեա» վեպի թարգմանությունը կցված Մ. Նալբանդյանի «Հիսուսյան» հոդվածը փոխադրություն է «Օտեչեստվեննիկ ղապիսկի» ամսագրում 1844 թ. զետեղված Ռատինսկո: թարգմանությունից («Утеши»)՝ «Հյուսիսափայլի» պատմության համար անվերապահ արժեք են ներկայացնում նաև ամսագրում տպագրված հոդվածների մի շարք գրական կեղծանունների վերծանումները և ճշգրտումները:

Վերջը նշված իր արժեքավոր կողմերով հանդերձ Ռ. Նանումյանի «Ստեփանոս Նազարյան» մենագրությունը զերծ չի մնացել և մի քանի վրիպումներից ու վիճելի կողմերից, որոնց մեծ անդրադառնում ենք՝ աշխատության հետագա հրատարակության մեջ դրանք խմբագրված տեսնելու ցանկությամբ:

Մեր կարծիքով, հեղինակը ճիշտ կվարվեր, եթե առանձին բաժնով ներկայացներ «Հանգես նոր հայաստան» աշխատությունը և դրան վերաբերող բանասիրական նյութերն ու իր

հետևությունները, Մենագրության մեջ, սակայն, երրորդ գլուխը վերնագրելով «Ստեփանոս Նազարյանը և նրա «Հյուսիսափայլը», Ռ. Նանուժյանը հարկադրված է եղել խառնել այդ երկու գրական հուշարձանները և դրանց հետ կապված իր եզրահանգումները: Այս հանգամանքը հեղինակին խնդարել է հստակորեն ձևակերպելու Ս. Նազարյանի հայացքների բնութագրությունը նրա գործունեության երկու տարբեր փուլերում և ցույց տալու նրա ապրած էվոլյուցիան իրրի գիտնականի ու հրապարակախոսի:

Այնուհետև, խոսելով «Հյուսիսափայլի» խմբագրի աշխարհայացքի մասին, հեղինակն ըստ պատշաճի գնահատում է նրա լուսավորական գործունեությունը, առանց խորամուխ լինելու նրա քաղաքական հայացքների բնութագրման մեջ: Այս առումով ուշադրություն է գրավում Մ. Նալբանդյանի և Ս. Նազարյանի փոխհարաբերությունների քննման անավարտությունը և, մասնավորապես, նրանց տարակարծությունների հարցի անախտումը: Մեր կարծիքով, Ռ. Նանուժյանը պետք է որոշակիորեն գնահատեր Ս. Նազարյանի սոցիալ-քաղաքական հայացքները և մեկնաբաներ նրա լիբերալիզմի առանձնահատկությունները: Զիշտ է, մեր պատմական գիտության մեջ այդ պրոբլեմն սպառնիչ քննել է ակադ. Ա. Հովհաննիսյանը, բայց Ս. Նազարյանին նվիրված այսպիսի հանգամանալից մենագրության հեղինակը պետք է իր խոսքն ասեր: Ա. Հովհաննիսյանի եզրակացությունների մասին և կամ ճշտումներ մտցնել նրա համապատասխան ձևակերպումների մեջ, եթե դրա անհրաժեշտությունը բխում էր իր շարադրանքի ոգուց: Բոլոր դեպքերում հիշյալ հանգուցային հարցը լպետք է շրջանցվել թեկուզ հենց այն պատճառով, որ Նազարյան-հրապարակախոսի աշխարհայացքի խնդիրը սերտորեն առնչվում է նրա թողած ավանդների և Անդրկովկասում բուրժուազիայի զարգացման երկրորդ փուլի, 70-ական թվականների հայ հրապարակախոսական մտքի գնահատականի հետ:

«Ստեփանոս Նազարյան» մենագրության մեջ տեղ են գտել և մի շարք վրիպումներ. այսպես, ազավազվել են որոշ հատուկ անուններ, ինչ որ չափով անփույթ է կազմվել գրքի ծանոթագրությունների բաժինը: Այս վրիպումները, սակայն, որ սոսկ խմբագրական աշխատանքի կարիք ունեն, հեշտությամբ կշտկվեն գրքի հաջորդ հրատարակության ժամանակ: Էականն այն է, որ հայ ընթերցողը հնարավորություն է ստանում ծանոթանալու օգտաշատ այս աշխատությանը, որը սովետական տարիների առաջին մենագրական գիտական ուսումնասիրությունն է՝ հայ մեծ հրապարակախոս և լուսավորիչ Ստեփանոս Նազարյանի մասին:

ՄԱՐԳՈ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների լեկեաճու

Г. С. САРКИСОВ, *Процессуальные меры предупреждения преступлений*, Издательство АН Арм. ССР, Ереван, 1978, 143 стр.

Предупреждение преступности—комплексная проблема, решение которой требует объединенных усилий всех субъектов социальной системы предупреждения преступности: партийных и государственных органов, предприятий и учреждений, общественных организаций, должностных лиц и граждан. Важное место среди них занимают органы дознания, предварительного следствия, прокурорского надзора и суда. «Понятно, товарищи,—говорилось в докладе Генерального секретаря ЦК КПСС Л. И. Брежнева XXV съезду КПСС,—что мы уделяли и будем впредь уделять постоянное внимание совершенствованию деятельности милиции, прокуратуры, судов, органов юстиции, которые стоят на страже советской законности, интересов советского общества, прав советских граждан»¹.

В связи с вышесказанным актуальность исследования кандидата юридических наук Г. С. Саркисова «Процессуальные меры предупреждения преступности» не вызывает сомнений. Достоинством рецензируемой книги является, на наш взгляд, то, что будучи новым, самостоятельным исследованием, она содержит множество обоснованных научных рекомендаций, направленных на дальнейшее совершенствование законодательства республики, регламентирующего порядок выяснения в процессе расследования причин и условий совершения преступлений и принятия мер к их устранению.

¹ «Материалы XXV съезда КПСС», М., 1976, стр. 82.